ՀՈՒՆԻՍԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Սիրելի՛ ընթերցողներ, սիրով ներկայացնում ենք Ձեզ ԵՆԿ հերթական ամսաթերթը, որում կպատմենք կազմակերպության հունիս ամսվա անցուդարձի մասին:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐ

Հունիսի 1-ին ԵՆԿ-ի «Երիտասարդների տանը» տոնական տրամադրություն էր տիրում:
Գունավոր փուչիկները, ջրաներկն ու մատիտները, քաղցրավենիքն ու հետաքրքիր խաղերը, երգն ու պարը **երեխաների միջազգային** օրն անմոռանալի դարձրին «Երիտասարդների տուն» հյուր եկած փոքրիկների համար:
«Երիտասարդների տան» թիմն ու սաները ջանք ու եռանդ չէին խնայել այդ օրը երեխաների համար խենթ ու խելառ դարձնելու: Նրանք նույնիսկ փոքրիկ ներկայացում էին պատրաստել , որը շատ հետաքրքիր էր և ուսուցողական:

«GET A BIKE, GET A LIFE» ԾՐԱԳԻՐ

Հունիսի 1-ին՝ Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումների շարքում, ԵՆԿ ՀԿ-ի "Get a bike, get a life" սոցիալական ձեռնարկատիրության ծրագրի ղեկավարն ու կամավորները Գյումրու Աբովյան ճեմափողոցում ցանկացողների համար իրականացրեցին նաև անվճար հեծանվավարության ուսուցում և ներկայացրեցին ծրագիրը՝ քաղաքացիներին խրախուսելով առավել ակտիվ առողջ ապրելակերպ վարել: Նշենք, որ նման հնարավորություն առաջիկայում ԵՆԿ-ն պարբերաբար ստեղծելու է մեր համաքաղաքացիների համար:

Մինչ այդ կարող եք նորություններին հետևել ծրագրի ՖԲ էջում, ինչպես նաև ծանոթանալ վճարովի **ծառայություններին**:

*«Get a bike, get a life» ենթադրամաշնորհային ծրագիրն իրականացվում է Եվրոպական միության ֆինանսավորմամբ՝ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության և Եվրասիա համագործակցություն հիմնադրամի « ՔՀ Կամուրջ» ծրագրի շրջանակներում:

«ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՁԵՌՆԵՐԵՑՈՒԹՅԱՆ ՈՒՍՈՒՑՈՒՄ ՀՅՈՒՐԸՆԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Հունիսի 1-ին Գյումրիում անցկացվեց տեղեկատվական միջոցառում՝ «Երիտասարդների ձեռներեցության ուսուցում հյուրընկալության և զբոսաշրջության ոլորտում» **ծրագրի** մասին: Միջոցառման ընթացքում ներկայացվեց ծրագիրը և դրա շրջանակում Գյումրի, Սարապատ, Ցողամարգ, Անուշավան, Ամասիա համայնքներում անցկացվելիք դասընթացները:

Հունիսի 5-ին տրվեց ծրագրի աշխատարանների մեկնարկը, որի շրջանակներում աշխատարաններ անցկացվեց Անուշավան, Գյումրի և Սարապատ համայնքներում: Աշխատարաններից երեքը դեռ ընթանումեն:

ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԿՈՐՊՈՒՍ ՀԱՅԱՍՏԱՆ

ԵՆԿ-ին միացավ ևս մեկ կամավոր)))

Նեյթն Գրեհեմը Հայաստան է ժամանել ԱՄՆ-ի «Խաղաղության կորպուս» ծրագրի շրջանակներում և 2 տարի շարունակ իր կամավորական ծառայությունն է իրականացնելու ԵՆԿ-ում:

«UPSHIFT ՀԱՅԱՍՏԱՆ» ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ԶՈՐԱԿՑՄԱՆ ՊԻԼՈՏԱՅԻՆ ԾՐԱԳԻՐ

Հունիսի 8-ին Յունիսեֆի «UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային ծրագրի շրջանակներում «Ծառատունկ, թռչնաբներ և կերամաններ» ծրագրային գաղափարի **Օքսիլիո** թիմն իրականացրեց ծառատունկ Գյումրիի Մուշ 2 թաղամասի թիվ 23 դպրոցի բակում, որի ընթացքում տնկվեցին դեկորատիվ ծառեր:

*«UPSHIFT Հայաստան» դեռահասների զարգացման և զորակցման պիլոտային» ծրագիրն իրականացնում է Գյումրու «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ն Յունիսեֆիհայաստանյան գրասենյակի հետ համագործակցությամբ:

ՇԱՐԺՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՆԿ-Ի ՀԵՏ

Հունիս ամսվա ընթացքում տեղի են ունեցել շարժունակության չորս ծրագիր:

Դրանցից առաջինը «CAUCAN – Counter and Alternative Narratives for Human Rights in the Caucasus» խորագիրը կրող միջազգային Էրազմուս+ դասընթացը մարդու իրավունքների կրթության թեմայով, որը տեղի ունեցավ Վրաստանի Ռուսթավի քաղաքում:

Հաջորդը Լեհաստանի Սկշինիցե/Լյուբլին քաղաքում տեղի ունեցած «Chasing after diversity» խորագիրը կրող միջազգային Էրազմուս+ երիտասարդական փոխանակման ծրագիրն էր երաժշտության և ներառական կրթությանթեմայով:

Վրաստանի Բակուրիանի քաղաքում տեղի ունեցավ «Think Wide - Light UP your body and mind!» խորագիրը կրող միջազգային Էրազմուս+ երիտասարդական փոխանակման ծրագիրը առողջ ապրելակերպի թեմայով:

Եվ վերջին ծրագիրն էր ԱՊՀ երկրներում ընթերցանության խթանման թեմայով միջազգային երիտասարդական ֆորումը Տաջիկստանում:

Ինչպես նաև այս ամսվա ընթացքում ունեցել ենք երկու ծրագրի հնարավորություն Էրազմուս+ ծրագրի շրջանակներում:
Որոնցից մեկը միջազգային երիտասարդական փոխանակման ծրագիրն էր միգրացիայի և ինտեգրման թեմայով Խորվաթիայում, իսկ մյուսը երիտասարդական աշխատանքի թեմայով միջազգային դասընթացն էր Մալթայում:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԿԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Ուրախ ենք տեղեկացնել, որ հունիս ամսին ունեցել ենք երկու երկարաժամկետ Եվրոպական կամավորական աշխատանքի հնարավորություն Լեհաստանի Կլաձկո և Բիդգոշ քաղաքներում:

Իսկ ԵԿԾ կամավոր Ժոզեֆ Բանյասը ԵՆԿ-ում սկսել է իրականացնել տեսանյութերի պատրաստման և լուսանկարչության ակումբ:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԾԱՌԱՏՈՒՆԿ

Հունիսի 16-ին Աշոցքի դահուկային սպորտի կենտրոնում տեղի ունեցավ Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության կողմից նախաձեռնած Եվրոպական ծառատունկը, որը կազմակերպվել էր «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամի հետ համատեղ:
Ծառատունկի նպատակն էր հիմնել Հայաստանում առաջին Ծառերի եվրոպական պուրակը, որը ևս մեկ կարևոր քայլ էր Աշոցքում դահուկասահքի ներուժը, ինչպես նաև զբոսաշրջությունը զարգացնելու ճանապարհին:
Ծառատունկին էին միացել նաև ԵՆԿ թիմը և « Երիտասարդների տան» սաները, ովքեր իրենց ակտիվ մասնակցությունը ցուցաբերեցին այս կարևոր նախաձեռնությանը

GLOW ԱՄԱՌԱՅԻՆ ՃԱՄԲԱՐ

Ուրախ ենք տեղեկացնել, որ այս տարի GLOW ամառային ճամբարները նախատեսվում են անցկացնել ցերեկային ճամբարներ Մեղրիում և Սպիտակի ԵՄՔԱ ՀԿ-ում (Spitak YMCA):
Ցերեկային ճամբարներին կարող են մասնակցել համապատասխանաբար Մեղրիում և Սպիտակում կամ մոտակա գյուղերում և քաղաքներում բնակվող աղջիկները:

Ինչպես նաև Armenian GLOW- ն սկսել է **ֆոնդահայթայթման արշավ**: Ուրախ կլինենք եթե մեր ֆոնդահայթայթման էջը տարածեք ձեր ընկերների շրջանում, քանի որ յուրաքանչյուր աջակցությունը կարևոր է մեզ և այն պատանի աղջիկների համար, ովքեր հնարավորություն կունենան մասնակցելու ճամբարներին:

ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԻ ԱՐՇԱՎ «ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻ ՏԱՆ» ՀԱՄԱՐ

Ուրախ ենք տեղեկացնել, որ մենք արդեն ունենք ավելի քան 1000 եվրոյի նվիրատվություն
Մենք շարունակում ենք քրաուդֆանդինգի արշավը «Երիտասարդների տան» համար, որպեսզի ավելի մեծ թվով երիտասարդներ հնարավորություն ունենան հասնելու իրենց երազանքներին: Այդ ամենի համար անհրաժեշտ է լրացուցիչ 16 820 եվրո:
Եթե ցանկանում եք նվիրաբերել, անցնեք հղումով, ինչպես նաև օգնեք մեզ տարածել այն ձեր ընկերների շրջանում:

Ցանկության դեպքում կարող եք նվիրաբերել նաև առձեռն կամ բանկային փոխանցմամբ՝ կապ հաստատելով՝
M: liana.hakobyan@yic.am
T: +37499426689

«ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԲԱՑ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՃԱՆԱՉՈՒՄ» ԾՐԱԳԻՐ

Հունիսի 12-ին «Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում» ծրագրի շրջանակներում ԿԱԶԱ շվեցարական մարդասիրական հիմնադրամի «Էսպաս» կենտրոնում (Երևան) տեղի ունեցավ Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ցանցի ձևավորման նախադրյալների վերաբերյալ աշխատանքային ամփոփիչ հանդիպում:

Հանդիպման ընթացքում մասնակիցները կիսվեցին ապագա ցանցի վերաբերյալ իրենց պատկերացումներով՝ հնարավոր ազդեցության, գործառույթների, խնդիրների մասով: Հանդիպման ավարտին հետաքրքրված անձանցից տեղում կազմավորվեց 7 հոգանոց աշխատանքային խումբ՝ ցանցի ձևավորման հետագա աշխատանքներին աջակցելու համար, հանդիպման մյուս մասնակիցների հետ համաձայնություն ձեռք բերվեց կատարած քայլերի մասին իրազեկել և շարունակել համագործակցությունը:

Իսկ հունիսի 28-ին Երևանումտեղի ունեցավ «Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի զարգացման հեռանկարները» խորագրով ֆորումը:

Ֆորումը նպատակ ուներ ներկայացնել «Հայաստանում բաց երիտասարդական աշխատանքի ճանաչում» ծրագրի արդյունքներն ու դաշտի հիմնական շահառուների մասնակցությամբ քննարկել Հայաստանում երիտասարդական աշխատանքի զարգացման հիմնահարցերը, առկա մարտահրավերներն և հնարավորությունները փորձն ու հետագա անելիքները:

Միջոցառման ընթացքում ԵՆԿ-ն փոխըմբռման հուշագրեր կնքվեց Գյումրու և Սպիտակի համայնքապետարանների հետ՝ ՀԿ - համայնքապետարան համագործակցությամբ Գյումրի և Սպիտակ համայնքների 12-18 տարեկան պատանիներին կրթական և երիտասարդական ծառայությունների տրամադրման վերաբերյալ:

Ֆորումն ամփոփվեց «Բաց երիտասարդական աշխատանքի տեղայնացում ՀՀ համայնքներում» և «Հայաստանում երիտասարդական աշխատանքի ցանցի ձևավորման հետագա քայլեր» թեմատիկ քննարկումներով:

«ՈՒՐԲԱԹՕՐՅԱ ՍՐՃԱՐԱՆ»

Հունիսի 29-ին տեղի ունեցավ ԵՆԿ-ի հերթական «Ուրբաթօրյա սրճարանը»:
Այս անգամ ճամփորդեցինք ժամանակի մեքենայով, վերհիշեցինք նախկին «Ուրբաթօրյա սրճարանները», ընկանք հիշողությունների գիրկն ու վերապրեցինք բոլոր գեղեցիկ ու հիշարժան պահերը՝ միաժամանակ նորովի բացահայտելով անցած ճանապարհը:
Ցանկանում ենք նշել, որ սա ամառվա վերջին սրճարանն էր: Ուրբաթօրյա սրճարանների շրջանակներում կհանդիպենք աշնանը: